

**ԿՈՒՐ ԹԱԳԱՎՈՐԻ ՏՂԵՆ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի),  
Լոռու բարբառ (խոսվածք)**

Ժամանակով ըլնում ա մի թագավոր: Էդ թագավորն ունենում ա էրկու կնիկ՝ մինը բարի, մինը չար: Ամեն մեկից ունենում ա մի տղա: Չարն ամեն օր բորբոքում ա թագավորին, որ իրա բարի կնգանը տանից դուս անի: Թագավորը շատ դեմ առնելուց եղը՝ չարից հաղթվում ա ու բարի կնկանը տանից դուս անում:

Էս կնկա հետն էլ գնում ա իրա տղեն:

Անց ա կենում մի քիչ ժամանակ: Թագավորը ջուխտ աչքով կուրանում ա: Ինչքան դեղ ու դիր են անում, բան չի դառնում, էլ հեքիմ, էլ ջասահ չի մնում: Վերջը գիտուն մարդիկ ասում են թագավորին. «Թե որ ձկան թագավորի, յա նրա տղի արնով աչքերդ լվանաս, կբացվին»:

Գնում են ծովը են սաղ աշխարի թոռչիները:

Թագավորի դուս արած բարի կնիկն էլ ասում ա իր տղին.— Այ որդի, գնա մի թոռ ճարի, դուն էլ գնա ծովի դրաղը: Բալիմ աստոծ աչողում ա՝ ձկան թագավորին դուն ես բռնում:

— Լավ ես ասում, նանի, —ասում ա տղեն,— իմ հերը չարին խափվեց՝ մեզ դուս արավ, թե որ աստոծ աչողի, բալիմ կարենամ քեզ նրա հետ բարիշացնել:

Ու թագավորի տղեն մի թոռ ա վեր ունում ու գնում:

Էդ սաղ օրը բոլոր թոռչիները գուր են աշխատում, մինն էլա կարում չի մի ձուկը բռնել, չիմն էլ մնում են պարապ-սարապ:

Ամա թագավորի տղեն հենց որ թոռը գցում ա ծովը, մի մենձ ձուկն ա ընկնում մեջը: Թոռը գոռով-գյուջով դուս ա քաշում և միջից հանում մի սիրուն ու լիտիկ ձուկ: Էդ ձուկը մի աչքը գցում ա էդ տղի էրիսը, ընթավորի մի դանչանքով մտիկ ա անում, որ ոնց որ աչքերով խոսելիս ըլի, թե. «Ինձ խղճա, բաց թող գնամ»: Թագավորի տղեն խղճահարվում ա, մեղքը գալիս ա, որ ըտթավոր գյոգալ ձկանը մորթի, վեր ա ունում ու եդ գցում ծովը: Էդ բանը թոռչիքը տենում են ու գալիս խաբար են տալի կուր թագավորին: Սա էլ կանչում ա իր դուս արած տղին ու հարցնում թե՝ էդ բանը դրուստ ա:

Տղեն խոստովանվում ա: Թագավորը սաստիկ կատաղում ա ու հրամայում.— Գնա՛ կորի աչքիցս, դուն էլ, քո մերն էլ էս օրվանից ոտներդ իմ երկրի սահմանից դուս կդնեք, էլ իմ աշխարհում չմնաք: Իրեք օրից եղը, թե որ իմանամ դուք իմ աշխարհումն եք, էրկուսիդ գլուխն էլ տալ կըտամ:

Մեր ու տղա վեր են կենում ու գնում. աշխատում են թեզով հեռանալ իրանց ֆողից ու ջրից, որ փախուստ տան կատաղած թագավորի սրից:

Շատ են գնում, թե քիչ, հասնում են մի անծանոթ երկիր, առաջին անգամ մտնում են մի մենձ գեղ: Որ մի կերպ իրանց գլուխը պահեն, սթրվեն, էդ տղեն դառնում ա գեղի նախրչի: Նրան ու մորը ջոկ տեղ են տալի, ու տունը մի օր բաժին ա դրկում նրանց: Էդ տղեն էդ տարին գեղի ապրանքը հենց սլամաթ պիում ա, որ մի տավարի վնաս չի դիպչում: Տավարատերերը նրա հախը լիովին տալիս են ու խնդրում, որ էկող տարին էլ մնա, հախը կավելացնեն:

Երբ որ ձմեռը գալիս ա, էդ տղեն մորը թողում ա էդ գեղում ու ինքը գնում՝ ձմեռվա ամիսներում աշխատանք անելու:

Գնում ա՝ տենում մի աղբրի կշտին նստած մի ծեր մարդ, բարով ա տալի, բարով ա առնում, աղբրից ջուր խմում ու կշտին նստում: Հարց ու փորձից ըրևում ա, որ ծերունին էլ ա գնում աշխատանքի: Տղեն ու ծերը հենց ըտտի հընկերանում են էս պայմանով, որ էրկուսն էլ ինչ որ աշխատեն, բերեն հալալ աղպոր նման կես անեն:

Վեր են կենում, գնում հասնում մի մենձ քաղաք: Իմանում են, որ էդ թագավորանիստ քաղաք ա: Գնում են ծառայության մտնում հմի դայֆախանում: Թագավորի տղեն մի հնենց դոչաղ ժաժ ա գալի, որ դայֆախանի տերը նրան շատ սիրում ա: Ըռավոտները վեր ա կենում, ամեն բան սարքում, կարգում, շինում, էփում, թափում ամեն բան վեր քաղում ու հազիր անում: Նրան լավ տոնլուղ են տալի: Ծերունին էլ ինչքան կարում ա՝ նրան մի կոնուց ա քոմագ անում: Մի քանի օրից եղը ծերունին նրան ասում ա.— Ըթենցով, օրական աշխատանքով, բան չի դառնալ: Արի քեզ մի լավ խրատ տամ: Մի բան որ դուն էլ թագավորի տղա ես: Արի դուն ըստիան թագավորի աղջկանը ուզի:

Ու նրան խրատում ա, թե ոնց ու ոնց պտի անի, որ իրա նպատակին հասնի: Էդ տղեն գնում ա պալատի դռանը շինած ու մահուղով պատած խնամխոսի քարի վրա նստում:

Թագավորը նրան ընդունում ա ու ասում.— Որդի, դուն էկել ես, որ իմ աղջկանն ուզես, ամա նա լալ ա: Էս էրկու տարի ա, չգիտեմ ինչ փորձանք ա պատահել նրան, որ նա լալացել ա: Թե որ կարենաս նրան խոսացնես, էն վախտը նրան քեզ կըտամ:

— Աստու կարող գորությունով կխոսացնեմ,— ասում ա էն տղեն:

Ու պայման են դնում իրեք բիգուն: Առաջին բիգունը տղեն գնում ա թագավորի աղջկա կուշտը նազիրի հետ:

Թագավորի աղջիկը, մի սիրուն աղջիկ, զուքված, զարթարված, նստած ա ըլում թախտի վրա ու խեղձ-խեղձ մտիկ անելիս ըլում էդ խելոք տղին: Տղեն խոնար գլուխ ա տալի ու սկսում ա օթախումը դրած շամդանի հետ խոսալ:— Այ շամդան, ես ասեմ, դուն անգաճ արա:

Թագավորի աղջիկն էլ թող վկա ըլի: Էն որ պտեմ ասիլ մի պատմություն ա, թե մի առակ ա, պահանջում ա արդար դատողություն:

Ու սկսում ա պատմել դուրգիարի, դերձկի ու տերտերի առակը. Էն որ մինը փետից մարդ ա շինում, մինն էլ շորեր ա կարում, հագցնում, իսկ տերտերը փետե մարդին ֆոքի ա տալի: (Էս առակը շատ հեքիաթներումն ին ասում):

Ու էդ ա դառնում շամդանին հարցնում.— Շամդան, քեզ ասեմ, թագավորի աղջիկն էլ թող արդար դատի, էն մարդը ո՞ւմ կհասնի: Ես ասում եմ, դուրգիարին, որ փետից մարդ շինեց: Թագավորի աղջիկն ընդիան գոռ ա անում ու խոսում.— Ո՛չ, տերտերին կհասնի, ամեն մարդ կարա փետից մարդ շինել ու շորեր կարիլ, իսկ կենդանություն տալ, ֆոքի ու շունչ տալ, էդ մինակ աստուն դիրեկան արժանավոր բանն ա:

Տղեն թագավորի աղջկանը խոսացնելուց եղը վեր ա կենում, գլուխ ա տալի ու ուրախ-ուրախ նազիրի հետ գալիս ա թագավորի կուշտը ու հայտնում, որ աղջկանը խոսացրուց: Ամա էն անխրդճմբտանք նազիրն ուրանում ա, թե խոսացրել չի:

Վրա երկրորդ բիգուն տղեն գնում ա թագավորի աղջկա կուշտը նազիրի ու վազիրի հետ ու սկսում ա էս պատմությունը.— Շամդան, քեզ ասեմ, դուն անգաճ արա, թագավորի աղջիկն էլ թող արդար դատի: Մի օր իրեք անվանի խանումներ՝ թագավորի, նազիրի ու վազիրի կնանիքը գնում են բաղնիս լողանալու: Բաղնիսից դուրս գալիս գտնում են մի ոսկե ձու:

Վիճում են, թե ո՞ւմ կհասնի էդ ձուն: Վերջը վճռում են, որ ոսկե ձուն վերցնի նա, ով իր մարդի գլուխը լավ տաք կգայ:

Թագավորի կնիկը հայտնում ա թագավորին, թե էս ու էս պատճառով ինքը նրա գլուխը տաք պտի գալ, թող զգույշ կենա:

Ու ինքը հաստատ սեր ա անում մի պալատականի հետ: Թագավորը մի օր կնկանը բռնում ա պալատականի կշտին, թե էս ի՞նչ բան ա: Կնիկը հավատացնում է, թե ոչինչ չկա, հանաք ա, թե ինքը միամիտ, թագավորի գլուխն էդ տաքն էկավ, որ ոսկե ձվին տիրանա:

Նազիրի կնիկն էլ էս տաքն ա գալի իր մարդի գլուխը: Նա սիրահարվում ա իր նոքարի հետ: Իրան տանիքը գետնի տափով մի քանքան ա տալի՝ գաղտնի ճամպա շինել տալի մինչի նոքարի օթախը ու դենը գնալ-գալ անում: Էդ կնկա խորհրդով մի օր նոքարը գալիս ա նազիրի կուշտը ու ասում. — Աղա, քո մի աղջիկն եմ սիրել, ուզում եմ հետը հարսանիք ըլիլ, խնդրում եմ գաս, մեր քյաբինը կտրես:

Նազիրը գնում ա տենում, որ ասած աղջկա տեղը իր կնիկն ա ընդէ նստած: Կարում չի բան ասիլ. խեթ-խեթ մտիկ ա անում ու միանով դուս ա գալի, վագում իր տունը: Գնում ա տենում, որ իր կնիկն, իրանց օթախումը նստած, արխեին կար ա անում:

— Այ կնիկ, — ասում ա, — էս ի՞նչ բան ա, մեր նոքարն ինձ կանչեց, որ իրա նշանածի հետ քյաբինը կտրեմ, գնացի տեհա դուն ընդի նստած, հենց իսկ և իսկ դուն:

— Այ մարդ, գծվե՞լ ես, ինչ ա, — ասում ա կնիկը, — ես ըստի արխեին ինձ համար կար եմ անում: Ով գիտի, կարելի ա, նրա նշանածն ինձ նման ա: Ծաղիկը՝ ծաղկին, ծառը՝ ծառին, մարդը՝ մարդին, կնիկը՝ կնկանը նման չի՞ ըլիլ: Բալիս նա էլ ինձ շատ նման ա:

Նազիրն արխենանում ա, վեր կենում, եղ գնում: Մինչի նրա նոքրի օթախը հասնիլը, կնիկը գաղտնի ճամփով ձեռաց եղ ա գնում ու նոքարի կշտին պուպսիկ նստում: Նազիրը գալիս ա տեսնում, որ, ըհը, իր կնիկն էլ ըստի նստած, — տեր աստո՞ծ, — ասում ա մտքումը, — էս ի՞նչ հրաշք ա:

Նոքարն ու կնիկը մի բերան ասում են. — Աղա ջան, ընչի՞ դուս էլար, քեզ ճամպա պիտե՞լով՝ աչքներս ջուր կտրեց: Դե մեր բանը վերջացրու, էլի:

Նազիրը խեթ-խեթ մտիկ ա անում կնկանն ու տազ անում:

Մի միանով էլ եղ դուս ա գնում ու վագում իր տունը:

Տենում ա կնիկը արխեին նստած գուլպա ա գործում:

— Այ կնիկ, — ասում ա նազիրը, — էս ի՞նչ հրաշք ա, մեր նոքարի նշանածը հենց քու նման ա, ոնց որ մի խնձոր կես արած:

— Էհ, ի՞նչ խիալբազ մարդ ես, — նեղանում ա կնիկը, — սարը՝ սարին, քարը՝ քարին, ջուրը՝ ջրին, ձեռը՝ ձեռին, աղջիկն՝ աղջկան նման չի՞ ըլիլ: Շատ կարելի ա, նա էլ ինձ շատ նման ա: Նազիրն էլ եղ գնում ա տենում՝ իր կնիկն էլ ընդի նստած, ձեռքը նոքարի ուսին դրած:

— Աղա ջան, քեզ ի՞նչ պատահեց, — ասում են նրանք, — խի՞ ես մեզ չըչարում: Դե մեր բանը քութահ արա, պրծի էլի:

— Նեղանալ միք, ձեզ մատաղ, — ասում ա նազիրը, — քեֆս մի քիչ խարաբ ա, կարում չիմ դինջ տեղս նստիմ: Էդ ա՝ շատին համփերել եք, քչին էլ համբերեցեք, էս ա հա, — մտիցս ընկել էր, — գնամ տանիցը դուռանը բերեմ ու ձեր քյաբինը կտրեմ:

Ասում ա, էլ եղ դուս ըլում, ափալ-թափալ վագում իր տունը, որ էս անգամ էլ տենի՝ կնիկն ընդի՞ ա, թե չէ:

Գնում ա տենում՝ կնիկը, կոները վեր քաշած, խմոր ա ունցում: Արխեին գլուխը եղ ա դարձնում ու հարցնում. — Հը, այ մարդ, ո՞նց էր, քու նոքարի ու իրա նշանածի քյաբինը կտրեցի՞ր, թե չէ:

— Այ կնիկ, ես մաթ իմ մնացել, — ասում ա մարդը, — ախար նրա նշանածը ոնց որ ոտից գլուխ դու ըլիս ընդեղ նստած:

— Ի՛հ, տնաշեն, — ասում ա կնիկը, — էլած ուշքդ էլ կորցրել ես: Ես ըստի արխեին ինձ հմար խմոր եմ ունցում, դուն ինչե՞ր ես մտածում: Ես հո ինս չեմ, ջինս չեմ, որ համ ըստի հասնիմ, համ, ընդի: Էն խեղճերին էլ զուր չըչարում ես: Գնա, գնա բանիդ, ամոթ ա: Համ իմ անումն ես կոտրում, համ դուն ես խայտառակ ըլում: Նրանք ի՞նչ կասեն, թե էս մարդը բա խիղճ չունի, որ

էսքան մեզ տանջում ա: Ախար շորը՝ շորին, երեսն՝ երեսին, աչքն՝ աչքին, ունքն՝ ունքին, ինքն՝ իրան նման չի ըլի՞լ: Բալիւմ նա էլ իսկ և իսկ ինձ նման ա:

Գնում ա իր օթախը, դուռան-քիթաբը վերցնում ու գնում իր նոքարի տունը քյաբինը կտրելու: Մինչի նրա տեղ հասնելը, կնիկը թեզով ձեռները լվանում ա, շորերը փոխում, զուգվում, բոշմաղը կապում, մատանիքնին մատներումը շարում, իր բոլոր զուքսով զարթարվում ու գաղտնի կարճ ճամպով գնում նոքարի կշտին նագով-տուզով նստում:

Նագիրը գնում ա տենում՝ իր ա կնիկը ձեռը նոքարի ճտովը գցած՝ ծանր ու բարակ ընդի նստած:

— Էհ, հլբաթ ես սխալված եմ, էս իմ կնիկը չի,— ասում ա ու քյաբինը կտրում:

Վագիրի կնիկն էլ էս տաքն ա գալի իր մարդի գլուխը:

Մի օր վագիրը ըիգունեց գալիս ա տուն քեֆը մի քիչ չաղ ու կնգան ասում.— Այ կնիկ ջան, վաղուց ա կերել չեմ, հմի խիալ միտս ա ընկել, մի լավ հալվա շինի, ուտենք:

— Ալքիս վրա, այ մարդ ջան,— ասում ա կնիկը,— էս սահաթին, նստի, մի քիչ դինջացի, մի բոպպէ չի քաշիլ:

Վագիրը նստում ա օջախի դրաղին ու ուզում ա չիբուխը սարքի.— Այ տո,— ասում ա կնիկը,— էս հոգեպահուստ թութուն ունեմ, բերեմ չիբուխդ լցրու: Ու գնում ա բերում: Վագիրը չիբուխը լցնում ա քաշում: Մի էրկու դուլաբ տալիս ա թե չէ, խորը քուն ա մտնում:

Թուրմե կըլի կնիկը թութունի հետ խառը քնացնող դեղ ա տվել:

Կնիկն էն սհաթին մի դալլաք ա կանչում, մարդի միրուքը վեր ա անիլ տալի ու նոքարնուն ասում.— Էս մարդին տարեք, մեջիտումը դրեք (նա առաջուց ամեն բան սարքած ա ըլում): Տանում են:

Մյուս օրը վագիրը աչքը մեջիտումն ա բաց անում ու զարմանում: Ուզում ա թամանլահ անի, միրուք չկա:

Աչքերը դեւ-դեն ա ածում, տենում ա, մեջիտ ա:

— Տեր աստոծ, էս ի՞նչ հրաշք ա, — ասում ա ինքն իրան, ախար, էս տանը չի՞: Իմ կնիկն էլ հալվա չէ՞ր էփում: Բա միրուքս ո՞ւր ա: Էս մեջիտումն ի՞նչ իմ շինում:

Ձեն ա ածում: Մեյիդնին գալիս են:

— Ես ո՞վ եմ,— հարցնում ա,— ըստի ի՞նչ եմ շինում...

— Մենք ի՞նչ գիտենք, թե դուն ո՞վ ես: Դուն չէի՞ր ըիգունս էկար, ասիր, որ ծանդր մեղք ես գործել, քառասուն օր պտես ապաշխարանք քաշիլ,— ասում են նրան:

Խեղճ վագիրը գլուխը թափ ա տալի ու սուս կենում:

Ու սկսում ա ապաշխարանքը, աղոթքն ու զոջանքը:

Կնիկն ամեն օր նրա համար լավ ճաշ ա դրկում: Էսպես քաշում ա քառասուն օր: Վագիրի միրուքն էլ եղ դուս ա գալի, առաջվա տոլ հասնում: Վրա քառասուն օրը նրա ճաշը եղացնում են ու նա շատ սովում ա: Հենց որ ճաշը բերում են, սոված վագիրը վրա ա ընկնում ու մի կուշտ ուտում: Կնիկը կերակրի մեջ քնացնող դեղ ա խառնած ըլում: Ու վագիրս վերջի թիքեն դեռ բերանը չդրած՝ էլ եղ խոր քուն ա մտնում:

Նոքարնին նրան վեր են ունում ու բերում տուն և կնկա կարգադրությունով օջախի դրաղին վեր դնում՝ չիբուխը կողքին:

Ըիգունը աչքը բաց ա անում թե չէ, կնիկն ասում ա.— Այ մարդ ջան, էս հալվեն շինել, հագիր եմ արել, իսկ դու խելի վախտ ա աչքդ կպցրել ես: Ես էլ սիրտ չեմ անում, թե քեզ զարթացնեմ:

Դե, վրա նստի, հալվեն անուշ արա:

— Ես էս քառասուն օրը մեջիտումը չի՞, ապաշխարանք չի՞ քաշում, էս ե՞՞ք եղ էկա:

— Այ մարդ, քեզ ի՞նչ պատահեց, էդ ինչե՞ր ես ասում, դուն չի՞ր, որ մի կես սահաթ աղաք էկար տուն ու ասիր, որ քեզ հմար հալվա շինեմ: Ես էլ մինչի հալվեն հագրեցի, դուն մի քիչ աչքդ կպցրիր: Հլբաթ էս կարճ վախտում էրազ տեհար...

— Է, ի՞նչ էրազ, ի՞նչ բան,— նեղացած ասում ա մարդը,— քառսուն օրվա էրազ կլի՞: Բա մեջիտն ի՞նչ էր, սեյիդնին ի՞նչ ին...

Կնիկը հալվեն աղաք ա բերում, սուփրեն գցում ու լացակումած մարդու ճտովն ա ընկնում ու ասում. — Այ մարդ ջան, քու արևը վկա, էրազ ես տեհել: Դուն էկար, դուն ասիր, որ քեզ հմար հալվա շինեմ, վաղուց ա կերել չեմ, միտդ ա ընկել: Ես էլ էն սհաթին հալվի թաղարեքին կացա: Դուն էլ նատեցիր կրակի դրադին ու քունդ տարավ:

Ու կնիկն ամեն կերպ մարդին հավատացնում ա, թե ինչ որ տեհել ա՝ էրագումն ա տեհել: Նա էլ ճարահատ, վերջի վերջո, հավատում ա ու ասում. «Հլբաթ տեհածս էրազ էր»:

Թագավորի տղեն իր պատմությունը վերջացնում ա ու շամդանին հարցնում. — Շամդան, դուն ասա, ոսկե ձուն ո՞ւմ կհասնի, ո՞ւմ տաքն էր լավ՝ թագավորի կնկա՞նը, նազիրի կնկա՞նը, թե վազիրի կնկա՞նը:

Ընդիան թագավորի աղջկա լեզուն բացվում ա ու ասում. — Իհարկե վազիրի կնկա տաքը ամենից լավն էր. նա համ խելոք էր, համ նամուսով, մյուս երկունսն աննամուսություն արին:

Տղեն վեր ա կենում, ուրախ-ուրախ գնում ա թագավորի կուշտը ու հայտնում բանի եղելությունը (միայն էս անգամ էլ նազիրն ու վազիրն ուրանում են, թե խոսացրել չի):

Երրորդ օրը րիգունը գնում ա ինքը թագավորը: Տղեն սկսում ա շամդանի հետ խոսալ: —

Շամդան, քեզ ասեմ, թագավորի աղջիկն էլ թող հոգով ասի, թե առաջի երկու րիգունը ես նրան խոսացրի թե չէ:

Թագավորի աղջիկն ուզում ա խոսա, միայն մի բան արգելք ա ըլում, զոռով գլխով ա անում, թե՛ դրուստ իս:

Թագավորը բրավուրդ ա անում ու սաստիկ տխրում:

Տղեն սկսում ա երրորդ օրվա փորձը. — Շամդան քեզ ասեմ, թագավորի աղջիկն էլ թող արդար դատի:

Ու սկսում ա էս պատմությունը. — Երկու մարդ իրար հետ շատ սիրով են ըլում, հոգու ախպեր: Միշտ իրար հետ առըտուր ու գործ են բռնում ու շատ հարստանում: Մինն ունենում ա մի սիրուն աղջիկ, մյուսը՝ իրեք տղա: Տղատերը մեռնում ա, ու կնիկն էլած-չէլածը խարջում ա ու երեխանցը պիում, մենձացնում (ջրադացն էլ ուրիշ աշխատանք բերող չի ըլում, աղքատանում ա): Տղեքը մենձանում ին, հասակնին առնում: Նոր տարվա օրը մերը նրանց ասում ա. — Գնացեք, որդիք, ձեր հոր ախպերացվի տունը շնորհավորեցեք, նա հարուստ մարդ ա, կարելի ա ձեզ մի-մի փեշքաշ տա:

Տղեքը կենդկենդ գնում են, հարուստը դրանց ջոկջոկ խոստանում ա, որ իր աղջիկը նրան կնության կտա: Տղեքը եղ են գալի ու իրանց մորը պատմում: Բանը բացվում ա: Տղեքը իրար հետ կովում են: Մինն ասում ա՝ «Ինձ պտի տալ», մյուսն էլ ասում ա թե՛ «Ինձ պտի տալ»: Վերջը գնում են հարստի մոտ հարցնում թե. — Ընչի՞ խափեցիր մեզ, իրեքիս էլ հավասար խոստացար տալ քո աղջիկը:

Աղջկա հերն ասում ա. — Որդիք, ես իմ խոսքի տերն եմ, գնացեք ամեն մինդ փեշակ սովորեցեք, ով որ ամենալավ փեշակը կսովորի, իմ աղջիկը ես նրան կտամ:

Իրեք ախպերն էլ վեր են կենում, գնում, ամեն մինը մի ճամպով: Մինը գնում ա աստղաբաշխություն սրվորում, մինն էլ հեքիմություն: Մի ախպերն էլ գնում ա դառնում թլիսմաչի: Սա մի օր ճամպովը գալիս տենում ա, որ դգի կեսում իրեք մարդ իրար հետ կռվին են տալի: Մոտենում ա նրանց ու հարցնում թե. «Էդ խի եք կռվում»:

Նրանցից մինն ասում ա.— Ղարիբ ախպեր, մենք ըստի իրեք բան ունենք, կարում չենք մեր մեջ փայ անել: Էս մինը խալիչա ա, թռչող խալիչա, որ վրեն նստես ու ասես. «Խալիչա, թռի՛ր», նա կթռչի ու դվորն ասես քեզ կտանի: Էս մինն էլ սուփրա ա, բացվող սուփրա, որ ասես.

«Սուփրա, բացվիր», նա կբացվի ու ասսու ամեն տեսակ բարիքն էլ հետը: Էս մինն էլ քելա-քյուլլահ ա, որ գլխիդ դնես, ոչ ով քեզ տեսնիլ չի:

— Ախպերտինք,— ասում է էդ տղեն,— դուք ջափա քաշեցեք մի քիչ դրադ կացեք: Էդ բաները ես ընենց փայ անեմ, որ իրեքդ էլ ռազի կենաք:

Նրանք քիչ հեռանում են:

Էդ տղեն սուփրեն դնում ա կռան տակը, քելա-քյուլլահը դնում ա գլխին, խալլի վրա կանգնում ու ասում. «Խալիլա, թռի՛ր»:

Էն սարսաղ մարդիքն էլ մնում են կանգնած: Էդ տղեն խալիչեն տակին, սուփրեն կռնատակին, քելա-քյուլլահը գլխին՝ գնում ա գտնում իր ախպորտանցը: Նրանց կշտին խալիչեն ծալում ա, դնում կռնատակին, սուփրեն պիտում ա ծոցումը, քեչա-քյուլլահն էլ ջիբն ա դնում: Ու նրանք ճամփա են ըլում դպա տուն:

Գալիս ին հասնում մի հին ջաղաց: Մութն ընկնում ա: Ասում են.— Քշերը ըստի կենանք ու ըռավոտը ճամպա գնանք:

Ախպերտինքը շատ սոված են ըլում: Թլիսմանչին սուփրեն հանում ա ծոցիցը, ըղաքին վեր դնում ու ասում. «Սուփրա, բացվի՛ր»— ու աչքդ էն բարին տենի, սուփրեն բացվում ա հազար ու մեն տեսակ կերակուրնին վրեն շարած: Ուտում են, կշտանում ու սուփրեն վե քաղում:

Աստղաբաշխը գնում ա դուս ու թեզ տուն գալի.— Տղեք,— ասում ա,— Էն աղջկա աստղը Էն ա հա խվարում ա:

— Հայ մի կշտին ըլիմ, դեղ տամ ձեռաց սաղանայ,— ասում ա հեքիմը:

Թալիսմանչին էլ խալիչեն բաց ա անում, ախպորտանց հետ վրեն նստում ու ասում.— Խալիչա, թռի՛ր, մեզ Էս սըհաթին տուն հասցրու:

Գնում են հասնում Էն աղջկանը:

Թագավորի տղեն Էս պատմությունը վերջացնում ա ու ասում.— Շամդան, դուն ասա, Էն աղջիկն ո՞ւմ կհասնի:

Թագավորի աղջիկն ընդիան վեր ա ունում ու ասում.— Սուփրա բացողին:

Խոսացնում ա: Թագավորը շատ ուրախանում ա. նա իր աղջկանն ու էդ տղին մենձ փառքով պսակում ա, քեֆ, ուրախություն սարքում ու եղնա իր աղջկանը իր փեսի հետ մենձ բաժինքով ու դուժինքով ճամփա գցում:

Թագավորի փեսեն իր հետ վերցնում ա իր ընկեր ծերունուն էլ, որ նրան Էն բաները խրատեց, իր մուրազին հասցրեց:

Ու գնում են հասնում Էն ախպրի կուշտը, որդի որ ընկերացել են: Նստում են ամեն բան հալալ ախպոր նման կես անում: Ծերունին առաջարկում ա, որ իրենց մեջ կապած պայմանի համաձայն՝ թագավորի աղջկանն էլ կես անեն: Իսկ տղեն խնդրում ա ծերունուն, որ թագավորի աղջկանը մենակ իրան տա, իսկ մնացած բաներն ինքը վեր ունի:

Ծերունին ռազի չի ըլում, ասում ա.— Թագավորի աղջկանն էլ պետք ա անպատճառ կիսենք, ամա դու արխեին կաց, ես նրան հենց կիսեմ, որ ինքն էլ չի իմանալ:

Ու թուրը վեր ա ունում, վրա բերում, որ թագավորի աղջկանը կիսումը կես անի:

Թագավորի աղջիկը վախից ծղրտում ա, ու Էն սիաթը բերնից նմի սև օձ ա վեր ընկնում:

Թուրմեկըլի էդ անտեր սև օձն ա էլիլ, որ մտած ա էլել խեղճ աղջկա փորը ու թողալիս չի էլել, որ նա խոսա: Աղջիկը ըթենցով փրկվում ա: Էն վախտը ծերունին բացվում ա ու թագավորի տղին ասում.— Հմի թող թագավորի աղջիկն էլ քեզ ըլի ու Էս ամեն տանն էլ, ես փայ չեմ

ուզում, ես իմ փայլը քեզանից վաղուց եմ առել, իմ կյանքս դու խնայեցիր: Ես ձկների թագավորն եմ, որին դու թոռով բռնեցիր, ամա դիմիշ չարիք, որ մորթես ու էլ եդ գցեցիր ծովը: Ես էլ իմ պարտքս համարեցի քու արած լավությունն փոխը եդ տամ ու հըմի սրտիս փափագը կատարված եմ տենում: Գնացեք նշանածներդ բախտավոր ապրեցեք:

Ու եդո ծերունին ջիբիցը հանում ա մի դեղ, տալիս ա թագավորի տղին ու ասում.— Էս էլ էն դեղն ա, որ քու հոր՝ թագավորի, կուրացած աչքերը բաց պտի անիլ: Նա դեռ սաղ ա, ամա լավ օրի մեջ չի: Կերթաս նրան կթափես, աչքերը կսաղցնես ու քու խեղճ ու անմեղ մոր հետ կբարիշացնես:

Ծերունին էս ասում ա ու աներևույթ ըլում:

Երկու նորապսակնին, որ մինչի էդ վախտը վեր քաշված կանգնած են ըլում, ուշքի են գալի, ուրախությունից իրար գրկում են ու լաց ըլում:

Ու նրանք քարվանով ճամփա են ընկնում ու գնում իրանց մորը գտնում: Խեղճ կնիկը շատ ուրախանում ա, երբ որ իրա թագա հարսին տենում ա էնքան սիրուն, խելոք ու լավը: Ու ըստիան չիմն էլ ուրախ սրտով ճամփա են ընկնում դպա իրանց երկիրը, հասնում իրանց քաղաքը և թուշ գնում թագավորի պալատումը վեր գալի:

Թագավորի տղեն հարցնում ա.— Իմ Հեր թագավորն ո՞ւր ա:

— Հրեն հավաքնում վեր ընկած,— ասում են նրան: Չար կնիկը նրան թախտից գցել ա ու նրա տեղն իրա տղին թագավոր նստացրել:

Անիրավը խեղճ կուր թագավորին գցիլ տված ա ըլում հավաքումը ու ընտի նրա հմար էնքան հաց ու ջուր ա դրկելիս ըլում, որ ոնչ ապրի, ոնչ մեռնի:

Թագավորի տղեն վազում ա, դռները կոտրտում, հորը հավաքնից դուս բերում, ձկան թագավորի տված դեղը քսում աչքերին ու սաղացնում: Հեր թագավորի աչքերը որ բացվում են թե չէ, մտիկ ա անում, տենում, որ հրես իր տղեն, իրա դուս արած կնիկը ու մի սիրուն նորահարս իր ըղաքին կանգնած: Տղեն պատմում ա հորը ամեն բանի եղելությունը:

Ու խեղճ ծերունին ուրախության արտասուքն աչքերին ասում ա.— Ես մեղավոր եմ, որդի, քո մոր դեմ ու քու դեմ ու դրա համար աստոծ ինձ պատժեց, ինչ որ քաշել եմ մինչի հմի, իմ մեղքի պատիժն ա էլել: Ես որ չարին չէի խափվել, էս բաներն էլ ո՞վ իմ գլուխդ կգար: Էլի հմի աստու փառքը շատ ա, որ ինձ չկորցրեց:

Ծեր թագավորն ասում ա ու իր բարի կնկանից ներողություն խնդրում, իր տղի ու հարսի ճակատը պաչում ու եդ դառնում հրամայում.— Թող հավաքեն իմ տերության բոլոր մեծամեծները, թող ոտի կանգնի իմ ժողովուրդը ու չարի դատաստանն անին:

Ու ծեր թագավորը գրկում ա իր չար կնկանն ու տղին ամեն բանից, իսկ իր հավատարիմ ու հալածված կնկանը պատվի հասցընում, իր լավ տղին էլ իր տեղը թագավոր նստացնում ու փառքով պսակում: Սաղ աշխարքը ոտի ա կանգնում, նրանց ուրախությանը մասնակից ըլում, ամեն բան իմանում ու զարմանում: Ինչ էլ կա՞ ըստեղ զարմանալու բան.— Բարին հաղթեց, չարը հաղթվեց: Բայց մի՞ թե աշխարքում միշտ ըրենց ա: Հեքիաթներում—հա: Իսկ մարդկանց կյանքի մեջ ո՞վ գիտի... Էրնակ չէր ըլիլ, որ մեր կյանքն էլ հեքիաթի նման լիներ, ուր ամեն հետ բարին հաղթում ա, չարը հաղթվում: Է՛հ, թող բարին համ ընդեղ ըլի, համ ըստեղ, իսկ չարը կորչի, կորչի անդարդ...»<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Աղասին, որ էս հեքիաթը վերջացրեց, Ավետ ապերը դիմացի նստարանից բողազը թափ տվուց, էլի չիբուխը վառեց ու քմծիծաղ տալով, սկսեց...».—Օ. Բ.: